

27

39

հ

Ս. Ի. ԼԵՇՉԵՒՆՍԿԱՅԱ

ՍՏԵՓԱՆ ԽԱԼՏՈՒՐԻՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1927



9(47)
Խ-17Լ

24 JAN 2006

ՀՈՍՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
(ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ)

30 MAY 2011

2-33

3(47)

ԽՎԵԼ

Ս. Ի. ԼԵՇԶԻՆՍԿԱՅԱ

[Handwritten signature]

PH
38067

ԱՏԵՓԱՆ ԽԱՆՏՈՒՐԻՆ



ՀԱՅԿ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1927

[Vertical handwritten notes in Armenian]

10 SEP 2013

3008



I

ԻՆՉՈՎ ԵՅԻՆ ՊԱՐԱՊՈՒՄ ՀԵՂԱՓՈՒԽԿԱՆՆԵՐԸ

Դուք գիտեք, ընկերներ, վոր միապետության տապալումը և Հոկտեմբերյան հեղափոխությունը մոտ ժամանակներս են միայն տեղի ունեցել: Բայց դեպի այդ հեղափոխությունները տանող ճանապարհը՝ տանյակ տարիներով եր պատրաստվում և հարչուրավոր ու հազարավոր հեղափոխականների արյունով և վողողված ու նրանց վոսկորներով ծածկված: Այդ հազարավորների մեջ կային և յեզակիրները. նրանք ուրիշների մեջ աչքի ելին ընկնում իրենց ուժեղ բնավորությամբ, իրենց գիտելիքներով և, վոր գլխավորն է, այն բանով, վոր հեղափոխությունն եր նրանց կյանքի միակ և ամենակարևոր գործը. նրանք այս գործի համար ելին ապրում և այն ավելի թանկ գնահատում, քան իրենց սեփական կյանքը:

Այսպիսի մի մարդ եր Ստեփան Խալսուրիկը:

Գրառեպար № 7բ. Հ. 485. Տիրամ 4000.
 Պետրատ յերկրորդ տպարան Յերևանում—47



3410. 84

Ստեփանը ծնվել է 1856 թ. Վյատկայի նահանգի Բոյլշիլե ժուրավի գյուղում: Մանկության որերում նա դպրոց էր հաճախում, իսկ յերբ պատանի դարձավ, ծնողները նրան հյուսնի աշկերտ տվին: Ստեփանն ուշադիր մի մարդ էր զեպի աջն բոլորը, ինչով պարապում էր: Իր արհեստը նա լավ սովորեց ու հիանալի վարպետ դարձավ:

Ստեփանը Լենինգրադ գնաց (այն ժամանակ Պետերբուրգ էլին ասում) և գործարան մը տավ՝ աշխատանքի:

Այդ ժամանակ հեղափոխական շարժումը Պետերբուրգում արդեն սկսվել էր: Գաղանի խրմբակներ էլին հավաքվում, թուղցիկներ էլին տպագրվում, վորոնք կոչ էլին անում ժողովրդին՝ միանալ և տապալել թագավորին. ընդհատակյա ժողովներում քննության էլին առնվում բանվորական կյանքին վերաբերող բոլոր հարցերը. ձեռք էլին առնվում պայքարի միջոցներ՝ տերերի դեմ, ծանոթանում էլին արտասահմանի բանվորների կյանքին (1875 թ.):

Բանվորական ավելի կարճ որվա կամ մեծ աշխատավարձի, առհասարակ, աշխատանքի լավագույն պայմանների համար մղվող պայքարը — սնտեսական պայքար էր կոչվում, իսկ ցարական

կարգերի, միապետության դեմ մղվող պայքարը — քաղաքական պայքար: Ի հարկե, թե մեկը և թե մյուսը սերտ կերպով իրար են կապված, վորովհետև և ցարի գահը գործարանատիրոջն էր պաշտպանում, իսկ գործարանատերը՝ ցարի իշխանությունը:

Մայրաքաղաք գալով, Ստեփան Սալտուրինը բանվորական կազմակերպության անդամ դարձավ, շուտով խիստ հռոպալիստեց և սկսեց ամենակարեւոր ու դժվարին հեղափոխական աշխատանքներ կատարել (1876 թ.):

II

ԻՆՏՊԻՍԻ ՄԱՐԳԻ ԵՐ ՍՏԵՓԱՆԸ

Ստեփանը բարձրահասակ, նուրբ, դեմքով և հեզ ու զեղեցիկ աչքերով մի մարդ էր: Սոսքով իս նրա դեմքի վրայով ամաչկոտության մեղմ ժպիտ էր անցնում, վոր կարծեք թե ասում էր՝ «ներեցեք ինձ, չեթե յես վորևե խոսքով ձեր սրտին կպա»:

Դեմքից վոչ մի կերպ չէր կարելի հասկանալ վոչ Ստեփանի ուժեղ բնավորությունը, վոչ էլ նրա մեծ խելքը: Ավելի շուտ՝ նա մի հիանալի մարդ էր յերևում:

Ստեփանը սակավախոս էր, զուսպ և վոչ վորքի հետ «մտերիմ» չէր:

Բայց սիրով էր զրուցում և հաճախ գնում էր իր ծանոթ ուսանողների մոտ՝ խոսելու այս կամ այն բանի, կարգացած գրքի և զիտական հարցերի մասին: Պատահում էր, վոր այս մարդուն ծանոթացնելու համար, ուսանողները վագեվորվում էին, իսկ Ստեփանը լուռ լսում էր և միայն յերբեմն այս կամ այն խոսքն էր հարցնում: Նա, ի հարկե, իր յեղբայր-բանվորների հետ էր մտա, բայց նրանց հետ էլ զուսպ էր մնում և իր սիրտը վոչ վորքի առաջ բաց չէր աւնում:

Չնայած այս բանին, նա ջերմ սիրում էր ընկերներին, հոգ էր տանում գործազուրկների համար աշխատանք ձարելու, նրանց գրքեր էր հասցնում, հաշտեցնում էր, գործերը գլուխ էր բերում և այլն:

Իրենց հերթին, ընկերները շատ էին սիրում նրան:

Բանվորական ժողովներում Ստեփանը հազվադեպ էր խոսում, բայց յերբ գուրս էր գալիս խոսելու, նա կրակոտ և խելացի լեր խոսում:

Յեվ միշտ էլ ընկերները համաձայնում էին

նրան, վորովհետև վոչ վորք գործերն այնպես լավ չգիտեր, վոչ վորք ամեն բանի մեջ այնպես չէր թափանցում, ինչպես Ստեփանը: Դեպի ամեն մի փոքրիկ բան ունեցած նրա անկեղծ նվիրվածությունը, սիրալիր ուշադրությունը, նրա մեծ զարգացումը — այս բոլորն Ստեփանի համար մեծ ազդեցություն էին ստեղծում ընկերների վրա: Պապահում էր, վոր Ստեփանն անհնարին գործ էր ձեռնարկում, բայց այդ էլ էր ոգուտ բերում: Այսպես, նա մտածեց կազմակերպել Պետերբուրգի բոլոր բանվորների գործադուլ. այս նշանակում է, վոր բանվորները միանգամից թողնելին աշխատանքը և, այդպիսով ստիպելին տերերին բարելավելու աշխատանքի պայմանները: Այն ժամանակ այս բանն անիրագործելի լեր այն պատճառով, վոր բանվորները կազմակերպված չէին, դեռ խավար էին և անգիտակից: Բայց Ստեփանը բանվորական մեկ ծալրամասից մյուսն էր անցնում, ծանոթանում էր բանվորներին, իմանում էր գործարաններում և ֆաբրիկաներում յեղած բանվորների թիվը, բանվորական որվատեղությունը և այլն:

Այսպիսով, Ստեփանը տեղեկություններ էր ձեռք բերում բանվորների կյանքից: Ամեն տեղ, ուր Ստեփանը յերևում էր, բարձրացնում էր

բանվորների վոգին, շարժում եր նրանց մտքերը և կարծեք, թե նրանց արթնացնում եր քնից:

Ստեփանի սիրտն առանձնապես այրվում եր, չեբը սկսում եր մտածել բանվորական այնպիսի կազմակերպության վրա, վորը կարողանար ընդգրկել Ռուսաստանի բոլոր քաղաքները: Նա այնքան եր հավատացած, թե այս բանը շուտ կիրագործվի, — հարկավոր ե միայն գործի կաշել, վոր իր խոսակցին ել եր վարակում իր հավատով: Բայց Ստեփանն այն մարդկանցից չեբ, վորոնք ձեռքերը ծալած՝ անձնատուր են լինում անուրջներին: Նրա մեջ ուժերը չեփ եյին գալիս և նա խոսքից գործի չեբ անցնում: 1878 թ. ամառը, քառասունհինգ տարի սրանից առաջ, Ստեփանն ուղևորվեց Վոլգայի կողմերը, գործարանից գործարաններ անցնում և բանվորների մեջ հետաքրքրություն արթնացնում դեպի հեղափոխական գործը: Այնտեղից նա պատրաստվեց Ուրալի կողմերը գնալու, բայց Պետերբուրգի բանվորները նրան յետ պահանջեցին: Պետերբուրգում նա ավելի հարկավոր եր:

Մի քանի ամսից հետո ծնունդ առավ «Հյուսիսային Ռուսաստանի Բանվորական Միութչունը» (1878 թ.): Այս միութչան մեջ մտան հրմուտ հեղափոխական բանվորները: Առաջին իսկ

շաբաթներից «Միութչուն»-ը 200 անդամ ունեցավ: Առաջին անգամ Ռուսաստանում հնչեց այն աղը, թե ռուսական բանվորներն իրենց շահերը չեն ջոկում բոլոր լեռկիրների բանվորների շահերից:

«Միութչուն»-ը քաղաքական ազասութչան պահանջ առաջադրեց:

«Միութչան» հոգին Ստեփանն եր:

Այդ ժամանակ հեղափոխական բանվորները վորոշեցին գաղտնի թերթ հրատարակել և թերթի ապագա խմբագիր՝ միաձայն Ստեփանին ընտրեցին:

Ստեփանը պետք ե դեկավարեր թերթը, տըպագրութչան համար հոգվածներ ընդունելու ու նյութեր ընտրելու և այլն: Յենթադրվում եր, վոր այդ թերթում բանվորներն իրենք պետք ե գրեն իրենց կյանքից, պետք ե անեն այն, ինչ վոր հիմա ամբողջ Ռուսաստանում բանթղթակիցներն են անում, այսինքն՝ բանվորական թղթակիցները: Բայց այն ժամանակ այդ գործը բանվորական կյանքում բոլորովին նոր բան եր և կառավարութչունից գաղտնի միայն կարելի չեբ վարել:

Բայց մի դեպք պատահեց, վորը փոխեց

Ստեփանի ծրագրերն ու նրա ամբողջ գործունեյությանը նոր ընթացք տվեց:

Ահա թե ինչպես պատահեց այդ:

III

ՏԵՐՐՈՐ

Այն ժամանակվա հեղափոխական խմբակները քաղաքում՝ բանվորների ու յերիտասարդ ուսանողների մեջ էյին պրոպագանդա մղում, գլուղում՝ գլուղացիների:

Բայց ցարական իշխանությունը կատաղաբար զիմադրում էր հեղափոխականների գործունեյությանը: Նրանց հետամտում, բանտ էլին նստեցնում, աքտորում, մահափորձի էյին յենթարկում: Հեղափոխությունը պահանջում է հեղափոխական դասակարգից, վոր սա իր նպատակին հասնի բոյոր այն միջոցներով, վոր իր ձեռքում ունի — գործադուլի, զինված ապտամբության միջոցով, յեթե պեաք է, կուվով, առհասարակ, բոյոր այն միջոցներով, վորոնք կարող են թշնամուն չքացնել և ջախջախել նրա ուժերը:

Այս բանն այն ժամանակ է միայն հնարավոր, յերբ նպագաւոր ու տասնյակ հազար աշ-

խատավոր ժողովուրդ է մասնակցում հեղափոխական շարժմանը:

Բայց գործն այլ կերպ էր դասավորված Սալտուրինի որով: Բանվորների ու գլուղացիների մեջ գիտակից հեղափոխականների թիվը դեռ քիչ էր. տեղ-տեղ հեղափոխական կայծեր էյին բռնկվում, վոր ցարական կառավարութլունը ջանում էր տրորել, հանգցնել և բնի մեջ խեղդել հեղափոխական ծիլերը: Այն ժամանակ հեղափոխականներն ստիպված էյին մենակ պայքար մղել գաղանի դավաւրութլունների միջոցով՝ ցարական առանձին բռնարարներին սպանելու:

Տերրորիստներն սպանում էյին նրանցից այնպիսիներին, վորոնք հատկապես շատ վաս էյին հասցնում բանվորա-գլուղացիական շարժմանը: Յարական այդ արբանյակների խղճի վրա խորտակված շատ կյանքեր էյին ծանրացած:

Թագավորի սպասավորների սպանութլունները քայքայում էյին ցարական կարգերը, իսկ ժողովրդական լաչն մասսանների մեջ՝ հեղափոխական զգացմունք էյին արթնացնում: Բացի այդ, հեղափոխականների վրա կատարած բարբարոսութլունների փոխարեն մի վրեժխնդրութլուն էր այդ և սպանալիք՝ ցարական դահիճներին:

Ամենամեծ նշանակութիւնը թագաւորի սր-
պանութեանն եր տրվում, վորովհետև հեղափո-
խականները կարծում էին, վոր թագաւորի
մահը քաղաքական ազատութիւն կրերի, իսկ
քաղաքական ազատութեան ժամանակ բանվորա-
կան շարժումը կծավալվի ամբողջ Ռուսաստա-
նում:

Տերրորիստական գործի կատարումը հեղա-
փոխական կազմակերպութեան բոլոր անդամնե-
րին չէր կարելի հանձնարարել: Այն մարդը, վո-
րին այդպիսի գործ է հանձնարարվում, պետք է
անվեհեր լինի, վորովհետև նա գրեթե ուղղակի
մեռնելու չէր գնում. հանգիստ պիտի լիներ, վոր-
պեսզի կարողանար կշռադատել ամեն մի փոք-
րիկ բան, վոր վերջին ըոպելին չկորցնէր իրեն.
սակուն, վորպեսզի բռնվելու և բանտարկութեան
գեպքում բերնից խոսք չթուցներ, ընկերներին
չմատնէր: Ստեփան Սալտուրիինը, ի հարկե, ա-
մեն բանով համապատասխանում էր այսպիսի
գործ կատարելուն:

Մի անգամ հեղափոխականներին լուր տվին,
վոր թագաւորի պալատի համար լավ հյուան է
պահանջվում: Իսկույն միտք ծագեց Ստեփանին
պալատ ուղարկելու, վորպեսզի թագաւորի դեմ
սպանութիւն պատրաստի ու կատարի: Այդ ժա-

մանակ Ռուսաստանի թագաւորն Ալեքսանդր
յերկրորդն էր: Նրա դեմ արդեն մահափորձ ա-
րել էին, բայց անհաջող: Ստեփանը մտածեց,
տատանվեց, վորովհետև գիտեր, վոր անհաջողու-
թեան դեպքում բանտարկութիւններ, հալածանք-
ներ են տեղի ունենալու և հեղափոխականները
սաստիկ տուժելու յեն: Բայց, վերջի վերջո, հա-
մաձայնեց, խնդրեց ամեն ինչ խիստ գաղտնի
պահել, և մտով պալատ՝ հյուանութեան:

IV

ՍՏԵՓԱՆԸ ԹԱԳԱՎՈՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

Իբրև լավագույն հյուան, Ստեփանը մուտք
ունէր թագաւորի բոլոր ոթյակները: Այդ ժա-
մանակ թագաւորը Պետերբուրգում չէր, Ղրի-
մում՝ իր ամարալին կայանումն էր:

Ստեփանն ամեն ինչ մեծ հետաքրքրութեամբ
էր աչքի անցկացնում: Պալատն իր ճոխութեամբ
զմայլեցնում էր: Ամենուրեք առասպելական հա-
րստութիւն էր թագաւորում: Թանկագին քարե-
րով զարդարված՝ արծաթե և վոսկե իրերի մի
պահեստ էր այնտեղ: Բայց Ստեփանին զարմաց-
նում էր պալատում թագաւորող սոսկալի ան-
կարգութիւնը: Բոլորը, մեծից մինչև փոքր, կո-

դոպտուս էյին պալատն ու դուրս տանուս՝ ինչ վոր կարողանուս էյին: Վորպեսզի կասկած առաջ չգար, Ստեփանն ստիպված էր ուրիշների հետ կենսամթերքներ գողանալ: Ի միջի այլոց՝ սպասավորին բոլորովին էլ «թագավորավայել» չէյին վարձատրուս: դժվար էր հասկանալ, վոր թագավորի լակեյներն ամսական ընդամենը ստանում էյին 15 ուրբի: Գլխավոր մուտքից պալատ մտնելը դժվար էր նույնիսկ ամենաբարձր աստիճանի անձանց համար. միաժամանակ յետևի դռնից գայիս գնում էյին, ովքեր ուզում էյին, սպասուհին անխտիր հյուրեր էր ընդունում, քեֆեր էր սարքում և հաճախ թողնում էր գիշերելու՝ յերկար նստած այցելուներին:

Նոյեմբերին սպասում էյին թագավորի վերադարձին:

Բոլորն էլ հավաքվեցին:

Պահակն ուժեղացրին: Սկսեցին մաքրել ու կարգի բերել: Ստեփանին խեղդում էյին հյուսնի աշխատանքներով:

V

ՍՏԵՓԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Ե ՊԱՅԹԵՑՆԵԼՈՒ

Ստեփանը կարողացավ լավ ծանոթանալ պալատի սենյակների դասավորմանը: Սեղանատունը,

ուր ամեն ոք վորոշված ժամանակին թագավորը ճաշում էր և վորը յերրորդ հարկումն էր տեղավորված, գտնվում էր այն ներքնատան վրա, ուր հյուաններն էյին ապրում: Այս բանը Ստեփանին ձեռնտու յեր. նա հույս ուներ քիչ-քիչ՝ բավականաչափ գինամիտ փոխադրելու ներքնատուն, ուր ինքն ապրում էր, վորպեսզի պայթեցնելու համար խողովակները լցնեք կիզանուս բաղադրությունով և հարկավոր ըոպեյին բաղադրությանը կրակ տար և քար ու քանդ անեք սեղանատունը:

Ստեփանը պալատ մտավ Ուոնեցկի նահանգի գյուղացու կեղծ անցագրով:

Վորպեսզի իր ծրագիրն իրագործած լինեք, Ստեփանը բոլոր շրջապատողներին շատ մեծ վստահություն պետք է ներշնչեք դեպի իրեն, պետք է իր նկատմամբ ամենափոքր կասկածի տեղիք անգամ չտար: Յեվ Ստեփանը դերը տանում էր. նա իրեն՝ «գոեհիկ» էր ձևացնում, բոլորի վրա աչք էր չոում, ամեն բանի մասին այնպիսի միամտությամբ էր հարցնում, վոր թագավորի բոլոր սպասավորները ծիծաղում էյին նրա վրա: Բոլորը նրան խելքում-խրատում, քաղաքավարություն էյին սովորեցնում, բոլորն էլ իրենց գերազանցությունն էյին ցույց տա-

լիս՝ «խամ մուժիկի» վրա: Իսկ Ստեփանը լսում
և անտաշ միամտի պես ականջի լետևն եր քո-
րում: Բոլորը նրա վրա ծիծաղում ելին, սակաջն
մեծ համակրանքով ելին վերաբերվում: Ամեն
բան լավ եր գնում:

Ստեփանը դինամիտ եր փոխադրում պա-
լաս և դարսում իր գլխատակը:

Դինամիտն արտաշնչվում եր, թունավորում
Ստեփանի արջունը և նրան անտանելի գլխա-
ցավ պատճառում: Բայց Ստեփանն ամեն ինչ
տանում եր տոկունությամբ և անշեղ դեպի իր
նպատակն եր գնում:

Բայց հանկարծ մի դժբախտություն պա-
տահեց. մասնակից կվյատկովսկուն, վորի հետ
Ստեփանը կապ ուներ, բանտարկեցին և խու-
զարկության ժամանակ նրա մոտից գտան Ձմե-
րային պալատի հատակագիծը, ըստ վորում, թա-
գավորի սեղանատունը կարմիր խաչով նշան եր
արված: Այս բանն իրարանցում առաջ բերեց
մայրաքաղաքի և պալատական ամբողջ վոստի-
կանության մեջ: Թագավորն արդեն Պետերբուր-
գումն եր: Խաչը, վորով պալատի հատակագծի
մեջ նշան եր արված սեղանատունը, պարզ ցույց
եր տալիս պալատում գոյություն ունեցող դա-
վաճանությունը: Սկսվեցին խստությունները:

Պալատում սկսեցին ամեն ինչ հետամտել, ամեն-
քի վրա կասկածել: Հյուաների սենյակը ժան-
դարմ դրին: Պահակավար գնդապետը հույս եր
դրել՝ գիշերային հանկարծակի խուզարկություն-
ներ կառարելու միջոցով դավաճանությունը յե-
րևան բերել: Յեվ մի գիշեր Ստեփանը սաստիկ
հուզված եր կատարված գիշերային խուզարկու-
թյունից. նրա բարձի տակ դինամիտ կար դրը-
ված:

Բայց ամեն բան հաջող անցավ: Իրանից
հետո Ստեփանը դինամիտը փոխադրեց սուլնդու-
կի մեջ: Ամենից վասն այն եր, վոր, ներս ու
դուրս անելիս, պալատի բոլոր բանվորներին ու
ծառայողներին մանրակրկիտ խուզարկում ելին:
Ստիպված պետք եր խորամանկ միջոցների գի-
մել, վորպեսզի կարելի լիներ դինամիտը փոք-
րիկ կտորներով պալատը տանել: Ստեփանի հա-
մար ծանր որեջ սկսվեցին: Նա թոքախտով հի-
վանդ եր, նրա նյարդերը լարված ելին մշտա-
կան հուզմունքով, վորը հույսից հուսահատու-
թյան եր անցնում, և անընդհատ ձևանալով: Հե-
ղափոխական ժելլաբովը, վոր Ստեփանի հետ
կապ ուներ, շտապեցնում եր՝ գործը շուտ վեր-
ջացնել: Բայց դեռ բավականաչափ դինամիտ
չկար, իսկ Ստեփանը չեր ուզում «գուցե»-ով

գործել, վորովհետև գիտեր, վոր թագավորն ազատվեր թե վոչնչանար, միևնույն է, պալթունը շատ սնմեղ գոհերի կյանք պետք է արժենար: Ուստի նա կամենում էր բավականաչափ զինամիտ ձեռք բերել, վորպեսզի նազդ կարողանար գործել: Յեվ, չնայած բոլոր վերապրումներին, Ստեփանն իրեն ամուր էր պահում և շարունակում էր իր գերը հիանալի տանել: Նույնիսկ հյուանների ներքնատուն դրած ժանդարմն էլ Ստեփանին համակրանքով էր վերաբերվում, իսկ պալատական լակեյները շարունակում էին ծիծաղել Ստեփանի գյուղական անշնորհք շարժ ու ձևերի վրա

— «Չե՛, ախպեր, չե՛, դրուստ է, կոկելու մեջ դու ենպես վարպետ ես, վոր լվի վոտքն էլ չի բռնի, համա իսկական վարժունք չես հասկանում»: («Լվի վոտքն էլ չի բռնի»), նշանակում է, վոր կոկած տեղն այնքան կոկ է, վոր լվի վոտքն անգամ կսայթաքի: Կոկողի համար այս ամենամեծ գովասանքն է):

Դեպի Ստեփանն ունեցած վստահությունն այնքան մեծ էր, վոր նա շարունակում էր աշխատել թագավորի սենյակներում և, մի անգամ, չերբ թագավորը ժամանակից առաջ էր վերադառնում, դեմ հանդիման պատասեց նրան:

Վոստրիկանություն և պալատական սպասավորների մեջ մշտական խոսակցություն տեղի ունեի՝ սոցիալիստների մասին:

«Ա՛յ թե կուզեյի տեսնել նրանցից մեկն ու մեկին հա՛,—ասում էր, որինակ, սպասավորներից մեկը:—«Իսկի չլի, մի փողոցումս ել ա պատահի, հա՛»:—Ախր դու նրան ինչ պտի ճանաչես, է, —տարկում էր Ստեփանը,—«խի՛, հո՛ ճակտին գրած չի՛»:—«Չես ճանաչի»: չե՛յ վախ գեղ, հե՛յ: Նա ենտեղ ձեռաց երևում ա: Ընենց ա գալիս, վոր ճամպա պտի տաս: Մեկ էլ են տեսար—գարկեց: Բանից չի վախենում, մուռթն ընենց բանցր ա բռնում, վոր կասես գիժ ըլի: Ընդրան ձեռաց կճանաչես, ախպեր»: Նման նշաններով, ի հարկե, Սալտուրինի մեջ սոցիալիստ նկատել չէր կարելի:

VI

ՊԱՅԹՅՈՒՆ ՊԱԼԱՏՈՒՄ

Լուր տարածվեց, թե հյուաններին պետք է փոխադրեն և պալթունը հետաձգելն արդեն անհնարին էր:

Պալթեցնելու համար հարկավոր էր, վոր միաժամանակ՝ թագավորը սեղանատանը լիներ, իսկ Ստեփանը՝ ներքնատանը—միայնակ, առանց

հակոյության: Պայման եր դրված, վոր յենթադրված ժամից հետո, յերբ տեղի պիտի ունենար պալթյունը, Սալտուրինը փողոցում պիտի հանդիպեր ժեյաբովին, և ժեյաբովը նրան մի գաղտնի բնակարան պիտի տաներ: Մի քանի որ շարունակ Ստեփանն անցնում եր ժեյաբովի մոտից, առանց բարևելու և մտալ կերպով շարտում եր. «հնար չկար»... «բան դուրս չեկավ» խոսքերը: Բայց, վերջապես փետրվարի 5-ի յերեկոյան Ստեփանը մոտեցավ փողոցում իրեն սպասող ժեյաբովին, բարևեց նրան ու բոլորովին հանգիստ կերպով ասաց՝ «պատրաստ ե»: Մի վայրկյանից հետո լավեց զարհուրելի թնգյուն: Պալատում լույսերը հանգան:

Բայց թե ինչ կատարվեց այնտեղ, նրանց հայտնի չեր:

Վոչնչացած, արդյոք, թագավորը, վորի մահվան համար այնքան մարդիկ զոհաբերվեցին: Հեռվից նրանք տեսնում ելին, վոր շատ ու շատ մարդկանց են դուրս բերում պալատից. սպանվածներն ու վիրավորներն ելին դրանք (1880 թ.):

Ժեյաբովը Սալտուրինին շտապով տարավ գաղտնի բնակարան: Այստեղ միայն անցավ Ստեփանի լարվածությունը, նրա նյարդերը, վորոնք շարունակ ձգված ելին լարերի պես, կարծեք՝

թուլացան և նա զգաց իրեն անչափ հոգնած ու հիվանդ: Սակայն, հարց ու փորձ եր անում. բնակարանում զենք կո՞, արդյոք: «Կենդանի չեմ հանձնվի», ասաց նա:

Շատ շուտով հայտնի յեղավ, վոր թագավորն ազատվել ե: Սալտուրինը սոսկալի ցնցված եր անհաջողությունից ու բոլորովին հիվանդացավ: Բայց փոքր ինչ միջիթարվեց, յերբ լսեց, վոր թագավորի դեմ կատարած մահափորձը ցընցել ե ամբողջ Ռուսաստանը և գեթ ժամանակավորապես յերկիրն արթնացրել ե քնից:

Ստեփանը փոքր ինչ կազգուրվեց թե չե՝ իսկույն գործի անցավ:

Բայց գործարանային բանվորների և բանվորական կազմակերպությունների մեջ ունեցած իր գործունեյությանը նա այլևս վերադառնալ չկարողացավ:

Ստեփանը տերրորիստի ճանապարհով զնաց ու մինչև վերջ չդարձավ այդ ճանապարհից:

Նրա ամբողջ հոգին արդեն այդ կերպ եր կառուցված: Այս գիրքում ել նա ընկավ:

VII

Ո՞վ եր ՍՏՐԵԼՆԻԿՈՎԸ

Թագավորի սպասավորները կաշվից դուրս ելին գալիս, վորպեսզի բռնեն և յերկրի յերե-

«ից չքացնեն հեղափոխականներին, բայց կասեցնել միապետութեան համար կործանարար հեղափոխականների գործունեությունը, ի հարկե, լավ չեք հաջողվում նրանց. վորքան շատ ելին ձնշում, այնքան շատ ատելութուն ելին ստեղծում իրենց դեմ և, տաս թշնամի բռնելով, ուրիշ քսանն ելին վաստակում...»

Զինվորական դատախազ Ստրեչնիկովը նույնիսկ ցարական հոգեառների մեջ էլ բացառիկ դաժանությամբ եր աչքի ընկնում:

Սկզբում նա կհեռում եր գործում:

Նրա հրամանով՝ խուզարկութուններն ու բանտարկութունները չեյին դադարում վոչ մի որ: Ամենափոքր կասկածի համար բանա ելին նստացնում ձերբերին ու մանուկներին. ընտանիքների հայրերին, ուսանողներին, բանվորներին, յերեխաներին, ըստ վորում կոպիտ վարմունքով, վախեցնելով, բարբարոսութուններ անելով շատերին լացացնում, հուսահատութեան ելին հասցնում: Վոչ մի ժամանակ ինքնասպանութեան այնքան փորձեր չեյին չեղել, ինչպես նրա որով: Յերբ պարզվում եր, վոր բանտարկչալի դեմ մեղադրական վոչ մի հանցանք չկա, Ստրեչնիկովն ասում եր.

— «Այն էլ բավական է, վոր չես համոզ-

ված եմ, թե դուք մեղավոր եք: Դատարանը կվճռի այնպես, ինչպես ինձ հաճելի կլինի»: Բանտարկյալներին յերկաթուղիներով ու նավերով ելին կրում: Բանտերն արագ լցվեցին: Ստրեչնիկովն իր դեմ կատաղի ատելութուն ստեղծեց նույնիսկ հեղափոխական միջավայրից դուրս. առանձնապես խորը դայրույթ առաջացրեց 19 տարեկան Ռոզովսկու ժահապատիժը: Նրան մա հապատտի չենթարկեցին միմիայն նրա համար, վոր նա չկամեցավ մասնել իրեն թռուցիկ սվող մարդուն:

Յարի կառավարութեան մոտ Ստրեչնիկովի գործունեությունն, ի հարկե, խրախուսանք ու յերախտագիտութուն եր առաջ բերում: Թագավորն ինքը նրա հետ հարաբերութունների մեջ եր մտել: Նրան հանձնարարված եր հետամտել և արմատախիլ անել բազաքական հանցավորներին Ռուսաստանի ամբողջ հարավում:

Ստրեչնիկովն Ուլեսսա փոխադրվեց:

VIII

ՍՏՐԵՆՆԻԿՈՎԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1882 թ. մարտին Ստրեչնիկովը ճաշեց և դուրս յեկավ գրոսսավաչր (բուլվար)՝ դրոսներու: Նա նստեց նստարանին:

Հեռվից նրան հետևում եր հեղափոխական
ժելվակովը:

ժելվակովը կամացուկ մոտենում եր, սեղ-
մելով գրպանում ատրճանակը:

Յերբ Ստրելնիկովը գլուխը շուռ տվեց, ժել-
վակովը նշան բռնելով՝ կրակեց: Գնդակը կպավ
ծոծրակի աջ կողմին: Ստրելնիկովը մի ակնթար-
թում կռացրեց գլուխն ու հենվեց նստարանի
թիկունքին:

Նա մեռած եր:

Անց ու դարձ անող ժողովուրդը զարման-
քից սասել եր տեղում: «Բռնեցեք, բռնեցեք:
Որը ցերեկով սպանեցին» — վերջապես ձայն ար-
վեց մեկը:

IX

ԽԱՆՏՈՒԹՅՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԸ

Այդ ժամանակ ժելվակովը կարողացավ թըռ-
չել այգու ցանկապատից և նեղ ու կլոր զառի-
վայրով, նեաի պես, սլանում եր ներքև — դեպի
Նավահանգստի փողոցը:

Նրան հետապնդում էին, ճանապարհը կըտ-
րում, բայց կատաղի հերոսությամբ կրակելով,
նա պաշտպանվում եր հետապնդողներից: Յեվ,
յերբ յերկու ատրճանակից ել կրակեց բոլոր

փամփուշտները, դանակը հանեց ու սկսեց զա-
նակով պաշտպանվել:

ժելվակովը արդեն հասվե-հաս եր զառիվայ-
րի տակին, ուր նրան սպասում եր ձիակառքը:
Կառապանի տեղում նստած եր Ստեփան Սալ-
տուրինը: Զառիվայրը, վորով փախչում եր ժել-
վակովը, վերջում նեղանում է, և Ստեփանը հաս-
կացավ, վոր այստեղ ժելվակովին կըրջապատեն
հետապնդողները: Ստեփանը թռավ կառքից և
ատրճանակը ձեռքին բռնած՝ վազեց, ընկերոջն
ազատելու, բայց առաջին իսկ քայլափոխում սայ-
թաբեց: Վոստիկանական գործակատարն ու նա-
վահանգստի մի քանի բանվոր վազեցին նրան
բռնելու: «Թողեք, չես սոցիալիստ եմ, չես ձեռ
կողմն եմ», — գոչեց Սալտուրինը: «Բանվորները
մի վարկյան կանգ առան, բայց գործակատարը,
վոր անձոննի, վիթխարի սրիկայի մեկն եր, վրա
պըծավ Ստեփանին, ասելով. — «Այ դու մեռնես
թե՛ մեր կողմն ես հա՛» — «Ի հարկե, վոչ թե քեզ
պես զարչելու կողմը, այլ դժբախտ բանվոր ժո-
ղովրդի կողմը», — պատասխանեց Ստեփանը, հա-
զիվ շունչը պահելով:

Վոստիկանութունը վրա հասավ, Ստեփա-
նի ձեռքերն ամուր վոլորեցին ու թոկերով կապ-
կապեցին: Յերբ ժելվակովը տեսավ, թե ինչ է

կատարվում կառքի մոտ, ճանապարհը փոխեց ու շարունակեց ուրիշ կողմի վրա փախչել, վորքան ուժ ունեւր: Բայց ուժերն արդեն սկսում էին դաժանանել նրան: Չինոֆսիկ Իգնատովիչը, վոր նրան հանդիպեց իր ճանապարհի վրա, հարձակվեց, վոր ժելվակովի առաջը կտրի: Ժելվակովը մի վայրկյան կանգ առավ, բայց այդ վայրկյանը ճակատադրական վայրկյան էր: Հետապնդողները հասան նրան, շրջապատեցին, վայր գլորեցին ու կապկապեցին:

Յերկու կալանավորներին ել իսկույն վոստիկանատուն տարան:

X

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԱՆՔԸ

Սպանության լուրն արագ անցավ քաղաքի վրայով: Սկզբում լուրերը հակասական էին: Իսկ չերբ իմացան, վոր սպանությունը «քաղաքական» է և վոր Սարելնիկովն է սպանվել, սկսեցին համակրել համարձակ տերրորիստներին:

«Յեթե իմանայինք, կպրծացնեյինք», — ասում էին նավահանգստի բանվորները:

Իգնատովիչը, վոր ոգնել էր ժելվակովին բռնելու, հիվանդացավ խղճի խայթից: Քաղաքում մեծ իրարանցում սկսվեց: Շատերն զբո-

սավայր ելին շտապում, անցքի տեղը տեսնելու, ուրիշները՝ վոստիկանության առաջ էլին հավաքվում: Ամենուրեք շրջագայում եր հեծյալ վոստիկանությունը: Այն շենքին, ուր կալանավորներն էլին գտնվում, անդադար մոտենում էին ի խանության բարձրաստիճան ներկայացուցիչները: Կալանավորներին ամբողջ որը հարցաքըննում էին:

Բայց ժելվակովը հրաժարվում եր պատասխանելուց, մինչև վոր նրան չասեցին, թե սպանված է, արդյոք, Սարելնիկովը: Նրան այդ ասացին. — «Դե, հիմա ինչ ուզում եք՝ արեք ինձ»: — Սակայն, հարցաքննության ժամանակ չհաջողվեց իմանալ՝ վոչ այն, թե ովքեր են նրանք, վոչ ել նրանց իսկական անունները: Պարզ եր, վոր պետք է թագցնեյին, վորպեսզի իրենց հետքերով չկարողանային գտնել մյուս հեղափոխականներին — կազմակերպության ընկերներին:

Հենց նույն գիշեր նրանց փոխադրեցին քաղաքային բանտի նկուղի հարկը: Նույն այդ բանտում նստած էին քրեչական հանցանքների — սպանությունների, կողոպուտների համար կալանավորվածները, և սրանք անգամ մեծ համակրանքով վերաբերվեցին Սարելնիկովի սպանող-

ներին, նույնիսկ նաև հուղում եր այդ հերոսներին համարձակությունն ու անվեհերությունը:

XI

ԳՍԱՐԱՆՐ

Մի գատարան, վոր տեսնված չեր նույնիսկ անորենք Ռուսաստանում, դատում եր Ստրելնիկովի սպանողներին:

Խոր գիշերին, ինչ վոր մի անհայտ տեղում հավաքվել եր գատարանը, բոտ վորում դատավորները նշանակված էին իշխանության քահանաձուլքով: Ամեն ինչ կատարվում եր խիստ գաղտագղի:

Չնայած այս բանին, հաջողվեց իմանալ, թե ինչ ելին խոսում գատապարայաները: Խալտուրինը նայանեց, վոր նա Ողեսոս չեր չեկել բանավորներին կազմակերպելու նպատակով, բայց Ստրելնիկովը խանգարում եր նրա ճանապարհը և նրան ել հանձնարարվեց կազմակերպել Ստրելնիկովի սպանությունը: Հենց այդ ել իրագործել ե նա:

Ժելվակովը գատարանում համարձակորեն ասաց. «Ինձ կկախեն, բայց ուրիշները կզոհվեն, նրանց բոլորին դուք կախել չեք կարող»:

«Ձեզ սպասող վախճանից վոչինչ չի փրկի ձեզ»:

XII

ՄԱՀԱՊԱՏԻԺ

Թագավորից հրաման ստացվեց՝ անմիջապես կախել Ստրելնիկովի սպանողներին: Իշխանությունը վորոշել եր բանտում նստած կալանավորներից դահիճ ընտրել, վորոնք գատապարաված եյին տաժանակիր աշխատանքները: Բայց հեշտ չեր նրանց մեջ գանել այնպիսի մի մարդ, վորը ցանկանար ժահապատիժ կատարել Ստրելնիկովի սպանողների վրա: Բանտարկյալները կտրուկ կերպով հրաժարվում եյին, չհրապուրվելով խոստացած փողերով և նվերներով: «Տեղիցս ժաժ չգամ, շանսատակ լինեմ, թե եսքան նրանց ձեռ տամ»: — «Ավելի շուտ բոլոր դեներայներին կխեղդեմ, քան թե նրանց ճկութս ելա կղիպցնեմ» — պատասխանում ելին կալանավորները: Բայց և այնպես, գտնվեց մեկը, վոր համաձայնեց անարգ առաջարկին:

1882 թ. մարտի 22-ի լուսադեմին, ժամը 6-ին գուրս բերին Խալտուրինին և Ժելվակովին:

Ժելվակովն արագ բարձրացավ կախադանի տախտակամածի աստիճաններով, համբարեց և ասաց. «14, ս, ինչ բարձր ե»: Նա ինքն իր ձեռքով հանգույցը վիզն անցկացրեց ու կախվեց:

Տանջված, թորախտավոր Սալտուրիներն ըստիպված եյին ոգնել: Դահիճը, վոր արիանալու համար խմել էր, յերկար «մյու եւ անում» հանգուցի հետ: Նույնիսկ մահապատիժը կարգացող սպայի գլուխն ել պտտվում էր, տեսնելով Ստեփանի հոգեարքի տանջանքները:

Ահա թե ինչպիսի հերոսներ ե ունեցել ուսական հեղափոխական շարժումը:

Յեզակի այդ հերոսները կրծքով եյին ճընշում ուսական միապետութունը, վորը ծանր լեռան պես կախված էր Ռուսաստանի գլխին:

Նրանք զարկվում եյին այդ լեռան սուր քարերին մեռնելու համար, բայց նրանց ալ, տաք արյունը հուժկու կովի յեր կանչում քնած ժողովրդին:

Շուռ տալ այդ լեռը— ժողովրդական մասսաները կարողացան միայն:

«Ազգային գրադարան»



NL 0415114

3008

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

